

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
վիճակագրության պետական խորհրդի նիստի

10.08.2020թ.

ժ.15:00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Ասանյան, Գ.Գևորգյան, Ն.Բաղդասարյան, Ա.Սաֆյան, Վ.Դավթյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝ Լ.Մարկոսյան

Եիստին անցկացվել է հետավար:

Օրակարգի նախագծում երկու հարց.

«Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2018 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվեարկության արդյունքները-կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

«Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից՝ 2018 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրին տրամադրելու թույլտվության մասին» հարցը:

/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/

Որոշեցին՝

թույլատրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տնային տնտեսությունների վիճակագրության բաժնին՝ Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրին տրամադրել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի կողմից 2018 թվականին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազան: Տվյալները կարող են օգտագործվել բացառապես հետազոտական նպատակներով, չեն կարող փոխանցվել այլ անձանց, չեն կարող հրապարակել անվանական հարթության անվանազերծված տվյալներ և համադրվել այլ աղբյուրներից ստացված անվանական տվյալների հետ, նշվելու են բոլոր հրահանգավորված նյութերի աղբյուրները, այդ անվանազերծված տվյալները հետազոտություններից հետո ոչնչացվելու են:

/Անհատական/

/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆ